

~~1917~~

# ՊԵՐՊԻՆԳԻ ՇՈՒՇՈՒՐ



ՊԵՏԶՐԱՑ

1931թ.

ՅԵՐԵՎԱՆ

25 JAN 2018  
38  
39

Ա. ԱՅԱԿԵՑՔԻՑ



ԴԵՄՊԵՆԳԻ Ա.Ա.ԱՊԵԼԸ



ԳԵՂԱՐԱՆ 1981 ՑԵՐԵԿԱՆ

**«ԽԱԶԱԿՐԱՑ ԱՐՇԱՎԱՆՔԻՑ» ԴԷԹԻ «ԴԵՄՈՒՆԳԻ»  
ԱՌԱՍՊԵԼԸ**

ՊԵՏՐԱԿԻ ՏՄՈՒՄՆ  
ՀՐԱՄԱՆԱԿ 1562  
ԳՐԱՌԵՊ. 6289 (Բ.)  
ՊԱՏՎԵՐ 1609.  
ՏԻՐԱԳ 8000



1-3436 գր.

Համաշխառքային տնտեսուկան ճգնաժամը սկսեց իրապործել իր իրավունքները։ Արեցոր ավելի զգալի յէ դառնում նբառ քայլայիչ ազգեցությունը համաշխարհային տնտեսության վրա, անդրադառնալով կապիտալիստական և՝ խոշորագույն և՝ փոքր պետությունների վրա։ Ճշնաժամը ծանրացավ և՝ բարձր արդյունաբերություն ունեցող յերկրների, և՝ աղքաբային յերկրների վրա ու տարածվեց նույնիսկ հեռավոր զաղութային ու կիսազաղութային յերկրներում։ Կապիտալիստական ամրող աշխարհն ընկալ բնդհանուր տնտեսական ճգնաժամի պլինդ ճանկերը։

Ամրող աշխարհում միմիայն մի յերկրից «անցակ ոյք բաժուկը» մեր յերկրից և նորհուրդների յերկրից։ Խորհրդային Միավորական սահմաններից այն կողմը մեկը մտափ հետեւից հանդչում են հալոցները (մետաղածուրանները), մեկը՝ մյուսի հետեւից կանգ են առնում զուծարանները, միլիոնավոր բանվորներ փողոց են շփրափում, ավելացնելով գործազուրկների բանակը։ Մեր յերկրի սահմաններից այն կողմը, ամեն որն ավելի ու ամենի աղքատություն և դիրում ազդաբնակություն հիմնական մասսաների համար, տնտեսավոր քայլայում և միլիոնավոր հողագործներին և միաժամանակ

ուժեկացնում և դասակարգացին հակասությունների առ  
ձևմամբ, տանում և գեղարի դասակարգացին մեծագույն  
կորիները:

Իսկ մեզ մոտ՝ ԽՍՀՄ-ում բոլորի աչքի առջև ա-  
ճամ են հսկա գործարանները; արդյունաբերության  
մեջ ներդրավում են մելիոնավոր նոր բանվորներ,  
ելեկտրիֆիկացիայի և մեքենայացման և յինթարկ-  
վում «Փասվար Առուատաններ»։ Վերացված և գործա-  
դրկությունը սոցիալիստական նոր ձևով և վերակա-  
ռուցվում գյուղատնտեսությունը։ Զնայած մեր սո-  
ցիալիստական շինարարության հանապարհին ծառա-  
ցած բոլոր գույքարություններին, մենք հաստատուն  
քայլելով առաջ ենք դնում։

Մեր գործարդական տնտեսության մեջ կիրաւող  
պրանային սկզբունքը միթխարի առավելություններ և  
ընձեռում մեզ՝ կապիտալիստական աշխարհի հանդիպ։  
Տնտեսության խորհրդացին ձեւը գործնականորեն ա-  
պացուցեցին իրենց առավելությանները կապիտալիս-  
տական յերկրների տնտեսավարժան ձեւը հանդիպ։

Մինչդեռ կապիտալիստական աշխարհում անշե-  
ղործ խորանում և արգյունաբերության և գյուղատն-  
տեսության զարգացման անհամաշխությունը, ԽՍՀ  
Միության մեջ գյուղատնտեսության սոցիալիստական  
վերակառուցումը և չքավոր ու միջակ տնտեսություն-  
ների կուեկտիվացումն ամրապնդում և քաղաքի և գյու-  
ղի դաշնաբը լարձրացնում և գյուղացիության հիմնա-  
կան մասսաների կենսական մակարդակը, փրկում և  
նրանց չքավորությանից և քայլայումից, դարձնում  
և սոցիալիստական շինարարության ակտիվ մասնա-  
կիցները։

Մինչդեռ կապիտալիստական աշխարհում անշե-  
ղործն սրվամ և սպառման և հումուցիթի շուկաների,  
կապիտալի գործադրման շուկաների համար մղվող  
մրցության պայքարը և ավելի ու ավելի հրատապ և  
գարձնում աշխարհը բաժանելու համար մղվելիք հա-  
մաշխարհային նոր պատերազմի վտանգը, մինչդեռ  
կապիտալիստական յերկրներում կապիտալիստական  
սուանձին խմբավորումների մրցությունը հսկայական  
մակումներ և կորուսաններ և առաջացնում—մեղանում  
վոչ միայն մրցություն չկա ժողովրդական տնտեսու-  
թյան առանձին ճյուղերի և առանձին ճեռնարկություն-  
ների միջև, այլ ընդհակառակը, տնտեսության այս  
կամ այն ճյուղի զարգացումն ամելացնում և յուս բո-  
լոր ճյուղերի արտակարկան հնարավորությունները և  
պլանաշահի բարձրացնում և ամբողջ յերկրի եկոնոմի-  
կան։ Ի տարրերություն կապիտալիստական տնտեսու-  
թյունից, անսեսավարժան մեր, սոցիալիստական ձե-  
պերը մեջ հնարավորություն են տայլու կենտրոնաց-  
նելու մեր ուժերն ու միջոցներն այնպես, վոր վեր-  
ջինները առավելագույն ողուտ տան ԽՍՀՄ-ի ժողո-  
վորության տնտեսությանը, հնարավորություն են տա-  
յիս ուղղերու այդ ուժերն ու միջոցները մենք տնտեսա-  
կան ֆրանսի կարևորական ճակատամատքը։ Տա-  
ննումքիւնը մեր միջոցներով և անշեղործն բարելավելու-  
րանվոր գասակարդի ու գյուղացիության շիմնական  
մասսաների։ Հքավոր ու միջակ խավերի գրությունը։

Մինչնույն ժամանակ մենք անսուռ ենք, թե ինչպես  
կապիտալիստական աշխարհում, հետզհետե խորացող  
համաշխարհային ճպնագամն անշեղործն սահմանափա-  
կում և համաշխարհային շուկան, սաաջացնելով գրա-

նից բղիսող բոլոր հետևանքները, իսկ վերջիններս նախ և առաջ հարվածում նն քաղաքի և գյուղի աղխատառ վորին:

Ներկայումս կապիտալիստական յերկրներում կա 35 միլիոն գործազուրկ, իսկ դա նշանակում է, վոր այդ յերկրների աղքաբնակության 100-120 միլիոնը (հաշված ընտանիքների հետ միասին) նվազեցրել են իրենց առանց այն ել ցածր գնողունակությունը: Գերմանական կոնյունկտուր ինստիտուտի տվյալներով, միմիայն Գերմանիայում բանվոր դասակարգը, աճող դորձագրկության պատճառով, 1930 թ. պակաս ե ստացել 2 միլիարդ մարկ, այսինքն՝ 920 միլիոն ռ.: Միմիայն Անգլիայում գործազրկության չորրածիվ անգլիական բանվորների յեկամուտն 1930 թ. 6 ամսում նվազել է 200 միլ. Փունտ-ստերլինգով կամ 2 միլիարդ սուբսիդ: Ինչպիսի՞ կորուստներ ունի ուրեմն Ամերիկայի քանվոր դասակարգը, վորտեղ գործազուրկների թիվը կազմում է առնվազը 10 միլիոն հոգի: Ցեղ միենույն ժամանակ ադրաբային ճգնաժամն ել իր հերթին քայլայում և միլիոնավոր գյուղացիներին և մանր Փերմերներին, քայլայում և մանր բուրժուազիային և ավելի յև սահմանափակում շուկան:

ԿՍՀՄ-ում շարունակ աճում է աղքաբնակության դնողունակությունը: Պահանջների ավելացմամբ մեծանում է նաև սպառումը: Մինչդեռ կապիտալիստական աշխարհում սահմանափակվում է արդյունաբերության արտադրությունը և ուժեղ ագիտացիա յե մըզվում ցանքերի կրծատման համար, մենք աշխարհում չլսված բայլչեվիկյան տեմպով հնդամյակն իրականացնում ենք 4 տարում:

Համաշխարհային բուրժուազիան, վորը դեռ յերկու տարի առաջ թերահավատությամբ և ծաղրով եր խոսում մեր հնդամյա պլանի մասին և ֆանտազիա յեր համարում վերջինս, ... յժմ հարկադրված ե խոստովանել, վոր նա միանգամայն իրական է:

«Սոցիալիստական շնարարության հաջողությունները, հնդամյա պլանի հաջողությունները այնքան ակնեվլ են, վոր չեն կարող հարկադրյալ խոստովանություններ չկորցել կապիտալիստական աշխարհից:

Զարդ ու վշուր յեղավ համաշխարհային բուրժուազիայի այն հույսը, թե մեր 5-ամյա պլանը կենթարկվի Փինանսական ձախողման: Հոդս ցնդեց նրանց հույսը մեր կուտարական հետամնացության, կադրերի պակասության նկատմամբ: Հոդս ցնդեցին նրանց այն հույսերը, վոր սովի վոսկրոտ բազուկը կտապալի մեր պլանի կատարումը: Զուրն ընկան նրանց հույսերը պրոլետարիատի և միջակի դաշինքի խզման նկատմամբ (համազումարի՝ հնդամյա պլանի կատարման վերաբերյալ բանաձեվից):

Մեր նվաճումներն այնքան մեծ են, վոր նույնիսկ խորհուրդների յերկրի ամենալուսերիմ թշնամիները հարկադրված են ընդունել այդ՝ չարանենդ Փշոցով:

Մահամերձ կապիտալիզմը սկսում է լիովին գետակցել մեր առավելությունները, ուստի ավելի կատաղի յե դառնում միջազգային բուրժուազիայի վայրենի վոռնոցը ԽՍՀՄ-ի գերմ:

Այդ ապացուցելու համար բերենք մի քանի վաստեր:

Նյու-Յորկ հահանգի պատգամավորը կապիտալիզմին նախազգուշացնող հետեւյալ ճառն եր արտասանել ամերիկյան պարլամենտում:

«Խորհրդային պետությունը — ասում եք նաև վոլովես տնտեսապես լրիվ պլանի բազա, ամենառեժեղ գինքն ե կոմունիստների ձեռքին։ Ուստի նա մեծագույն վտանգ է հանդիսանում համաշխարհային քաղաքականության և համաշխարհային դեմոկրատիայի համար։ Խորհրդային պետությունը դեկավառամ և յերկրի թե արդյունաբերական և թե՝ զյուղատնտեսական ամբողջ ապրանքաշինառությունը։ ԽՍՀՄ-ում վասնավոր ձեռնարկությունները զուրկ են գոյության իրավունքից։ Խորհրդային առաջնորդներն իրականացնում են տնտեսության ցուցաբանական պլանը՝ իմ կարծիքով, դա ամենահանդուգն պլանն է տնտեսական կյանքի ամբողջ պատմության մեջ։ Այդ պլանը նախատեսում է ԽՍՀՄ-ի թե՛ ամբողջ քաղաքային և թե՛ գյուղատնտեսական կյանքի մեքենայացումն ու սոցիալիստական վերակառուցումը հինգ տարվա ընթացքում։ Այդ պլանը ԽՍՀՄ-ի արդյունաբերությունն ու գյուղաբնակությունը պետք է զարգացնի այնպիսի ուժով, վոր ստեղծի մարտական մի միավոր՝ ընդունակ մարտակությելու ամեն մի յերկրի թե խաղաղության և թե պատերազմի ժամանակի։ Նոր պատերազմը զարդարում է ճնշացնել տան այդ վտանգը սպանում և իրականություն զառնալ։ Նա արդեն սկսել է բազիմ մեր արդյունաբերության դոները։ Համաշխարհային առաջարկը առաջարկությունների մեջ առաջարկ է առաջարկային համաշխարհային հրդեհը համաշխարհային հեղափոխությունն ե լինելու։ («Կոնգրեսոնել Խեկորդ» թերթի 1930 թ. ապրիլի 4-ի համար)։

Նախադպուշացնող նույնպիսի ժայներ են հաշում

վոչ ժիայն Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների պարլամենտում։ Վերջին տարիներս հաղթանակորեն առաջ ընթացող սոցիալիզմի հանդեպ հնչող յերկյուղի այդ արտահայտությունները մենք լսել ենք վոչ միայն կապիտալիստական կարևորագույն յերկրների պարլամենտական ամբիոնից, այլև մամուլի եջերից և սոցիալ-ֆաշիստական բոլոր կուսակցություններից։ Համաշխարհային կապիտալիզմի այդ հավատարիմ լակեյների ու գործակալների համարումարներում։ Բուրժուական իրավակարգին մեր սոցիալիստական շինարարության կողմից սպասնացող հարածուն վտանգի շուրջը վողքերով և լցված նաև ամբողջ համաշխարհային բուրժուական մամուլը։

Վո՞րքան վտանգավոր և Խորհրդային Միությունը։ Այսպիսի հարց ե առլիս Ամերիկայում լայն տարածված «Թորք Մեգիլին» ժուրնալը (1930 թ. մայիսի 1-ի համարում)։ ԽՍՀՄ-ին նվիրած իր հողվածում։ «Յեկոսպան արդեն սկսել ե զգալ ճնշումը-գրում և նա։ Մինչեւ այժմ միմիայն Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների վրա ելին բարգում բոլոր կշտամբանքների ծանրությունը։ Ենքոսպայի անկժան համար։ Սակայն վերջին ժամանակներս յեկոսպական հեռատես տնտեսություններն իրենց ուշադրությունը դարձրին Խորհրդային Միության վրա, վորի օտարյա պլանը ներկայաւում հանդիսանում է տնտեսության սիստեմում համաձայնեցված կերպով աշխատող միակ պլանն ամբողջ ախարհում։»

Այդ «հեռատես յեկոսպական տնտեսագետները», վորսոց ջատագովում և հիշյալ ժուրնալը, վոչնով չեն տարբերվում Ամերիկայի «հեռատես» տնտեսագետնե-

րից և նրանց առաջնորդ՝ նախագահ Հովհերից։ Համաշխարհային ամբողջ բուրժուադիան, խճճվելով նեիովող կապիտալիզմի ներքին և արտաքին հակասությունների ցանցում, յելք ե փնտում փակուղուց ի հաշիվ ԽՍՀՄ-ի։ Ընկեր Ստալինը, Համ Կ (թ) Կ-ի 16-րդ համագումարում ԽՍՀՄ-ի և կապիտալիստական պետությունների փոխարարելությունների մասին իր տված դեկուցման մեջ, առանձնապես վորոշակի ընդգծել և այդ պարագան։

«Ամեն անգամ-ասել եր նա-յերբ կապիտալիստական հակասությունները սկսում են սրվել, բուրժուադիան իր հայացքն ուղղում ե ԽՍՀՄ-ի կողմը, թե՝ չի կարելի արդյոք կապիտալիզմի այս կամ այն հակասությունը, կամ բոլոր հակասությունները միասին, լուսնել ի հաշիվ ԽՍՀՄ-ի՝ ի հաշիվ Խորհուրդների այդ յերկրի, հեղափոխության այդ ամրոցի, վորն իր դպյությամբ իսկ հեղափոխականացնում ե բանվոր դասկարգը և գաղութները, վորը խանդարում ե կազմակերպելու նոր պատերազմ, խանդարում ե վերաբաժանելու աշխարհը նոր ձեռվ, արգելք ե հանդիսանում նըրանց իշխելու խորհրդային ընդարձակ ներքին շատկայում»։

Յերկու սիստեմների՝ մեր, սոցիստական և կապիտալիստական սիստեմների հիմնական հակասությունները, վորոնք առանձնապես սուր բնույթ են ստացել մեր ապրած շրջանում, մարդկային պատմության մեջ դեռ չլոված, ընդհանուր կապիտալիստական արդի հզբաժամի շրջանում, ունեն այն հետևանքը, վոր ներկայում համաշխարհային բուրժուազիան այնպիսի կատարությամբ միջազգային տնտեսական բլոկադ

կազմակերպում և ռազմական արշավի յի պատրաստ-վում ԽՍՀՄ-ի դեմ։

«ԽՍՀՄ-ի դեմ ծրագրվող խաչակրաց արշավանքի բում պատճառը՝ հայտարարում ե բացեիրաց ամերիկյան «Նեյշն» ժուրնալը (1930 թ. մարտի 5-ը), - Խորհրդական պետության հետզհատե միջացող տնտեսական սպառնալիքն ե յեկտպական առևտությունների վիճակի յի ուզած գնով վաճառել («Ղեմպինզ») իր ասլրանքներն արտասահմանում, ոտարերկրյա վայրուտա ստանալու նպատակով վորի մեծ կարիքն ե զբում... Խորհրդային կառավարությունն ինքը համողված է, վոր նա ի վիճակի յի արաւդրության ինքնարձեքի բնազավառում 40 տոկոս խնայողությունն անել՝ համեմատած մյուս յերկրների հետ, վորովհետև Խորհրդային յերկրում չկա բարձր աշխատավարձ, չկան ոեկամի և տիջորդների ծախսեր, ինչպես և կապիտալիստական ժրցության պայմաններում անխուսափելի այլ ոլարազաներ։ Այդ բոլորի բացակայությունը ԽՍՀՄ-ին գարձնում ե Յեկուպայի ուժեղ մրցակիցը։ Ուստի զարմանալի չե, վոր Յեկուպայն սկսում ե պաշտպանվել, ինչպես վոր կարող ե Յեկուպայի կապիտալիզմի առաջնորդները կարող են չնորհակալ լինել, խորհրդային իշխանությունից՝ ԽՍՀՄ-ի կրոնական անհանդուրժյան համար, վորը նրանց առիթ ե տալիս գրգռելու հավատացող աշխարհը Խորհրդային Սիությունի դեմ»։

Բուրժուական այլ ժուրնալն այլպես, միանդամայն բացահայտ կերպով, մերկացրեց ԽՍՀՄ-ի դեմ երադրվող իշխակրաց արշավանքի հիմնական պատճառը։ Այդ հոգվածում զգացվում ե բուրժուազիայի ամ-

բողջ առելությունը գետի խորհրդացին իրավակարգը։ Յեթև մինչև այժմ համաշխարհացին իմակերպարզի կողմից ԽՍՀՄ-ի գեմ կազմակերպված բոլոր թշնամուկան յելություները, ներառյալ նուև խաչուկրաց արշավանքը, վիճեցին, առաջ այդ բնավ չափութեանդրստացնի մեզ, Վորովէետն խորհրդացին ապրանքների արտահանման գեմ մղվող ներկայից կամպանիայում, Վորը մեծագույն չափեր և ընդունել, մենք չենք կարող համաշխարհացին նոր պատերազմի վասնդ չափսներ, պատերազմի, վորի սուր ծայրն ուղղված ե ջեր դեմ։

ԳԵ՞ վոր գեռ չեն մարել Խորհրդացին յերկը դեմ դարնանը սկսված «խաչակրաց արշավանքի» արձաւանդները և ահա կապիտալիստական ամբողջ աշխարհում նոր, մեծագույն հալածանը և սկսվել Խորհրդացին Միության գեմ, կամպանիա յե սկսվել այսպես կոչված «խորհրդացին գեմպինդի» դեմ։ Հակախորհրդացին այդ նոր արշավանքը նույն նպատակներն ունի, ինչ վոր նախորդ կամպանիան, վորը մղվում եր. «ԽՍՀՄ-ի համատացյալներին բայլչելիքյան դաշնություններից պաշտպանելու» նշանաբանով։ Համաշխարհացին բուրժուազիան ձգտում և ինչ գնով ել լինի, կապիտալիստական պետությունների միանական ճակատ ստեղծել և տնտեսական բլոկադ կաղմակերպել մեր յերկը դեմ։ Նա գործի յե դրել բոլոր միջոցները, վորպեսի կարողանա ահճրաժեշտ պայմաններ ստեղծել ուղարկան ինտերվենցիայի համար, ապահովելով իր թիւ գունքն առաջիկա այն սաղմարշավում, վորն ուժեղ թափով պատրաստում և համաշխարհացին իմպերիալիզմի իր համար՝ համաշխարհացին գիշատչի համար

կառուցվող սոցիալիզմի առելիք յերկը դեմ։

Համ. Կ (բ) Կ 16-րդ համազումարը տալով մեր չշշաղգային գրության պնահատականը, առանձնապես վորոշակի ընդունեց վերջին ժամանակվա հակախրդարային արշավանքների պատճառները։ Կենտկոմի հաշվետվության առթիվ իր ընդունած բանաձեկում համագումարին արձանագրել ե.

«Խմբիքիալիստական սիստեմի բոլոր հականությանների սրում տեղի յե ունենում ԽՍՀՄ-ի և շրջապատող կապիտալիստական աշխարհի միջև հակասությունների սրման Խիջաղային ասելությունը գետի աշխարհիս միակ պրոտուարական գիլտատուրայի պիտությունը և նրա հեղափոխականացնող աղեղությունն արտահայտվում է տնտեսական բլոկադ՝ կազմակերպելու փորձերով, խորհրդագային արտահանության գեմ նրա մղած պայքարով, կրօնափորների կամպանիայով, բուրժուական ու սոցիալ-դեմոկրատական մամուլի կատաղի զբարարիչ կամպանիայով, ԽՍՀՄ-ի գեմ ուղղված պատերազմի ավելի ուժեղացած պատրաստությամբ։»

Վերջին 2-3 տարում վոչ մի որ չի ընդհատվել համաշխարհացին իմպերիալիզմի կատաղի հալածանքը ԽՍՀՄ-ի դեմ։ Անողությորհրդացին դիվանագիտական փոխարարերությունները խովելուց հետո հակախրդարային այդ կամպանիան անցավ մի շարք ետապներ։ Սակայն այդ կամպանիաները բոլորն ել հետափնդում եյին միենալու նպատակը՝ դրդել ԽՍՀՄ-ին զինված կոնֆլիկտի, առաջ շարժել Խորհրդարաների յերկը վրա իմպերիալիզմի մինչև առամները զինված հրոսականիմպերիալիզմի մինչև առամները զինված

իսմբերը, չափավանել առելի խռովը դայնին իշխանությունը, իսկ յեթե այդ չհաջողվի, պետք խոչընդուներ ստեղծել յերկրի ինքուստրացման և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման դեմ:

Անգլո-խորհրդային դիվանագիտական համարերությունների խորումը 1927 թվականի մայիսին և Արկոսի վրա կատարված հարձակումը, Քրանս-խորհրդային ստետեսական բանակցությունների դադարեցումը 1927 թվականի հունիսին, Ամերիկա ուղարկված մեր վոսկին դրավելու փորձերը, վոր արել եր Ֆրանսիան, ընկ. Վոյզովի սպանությունը (1927 թվականի հունիսի 7-ին), Լեհաստանում ընկ. Ռումանսի վրա կատարված ժամափորձը (1927 թ. սեպտեմբերի 2-ին), Պեկինի խորհրդային լիազոր ներկայացուցչության վրա կատարված գինված հարձակումը և Շան-Հայյի մեր հյուպատոսության շենքի պաշարումը, Կանտոնի հյուպատոսության շենքում տեղի ունեցած ավերը և աշխատակիցներից 5 հոգու գնդակահարումը 1927 թվականի դեկտեմբերին, Լեհաստանի խորհրդային առևտրական ներկայացուցիչ ընկ. Յելիզարովի վրա կատարված մահափորձը (1928 թվականի մայիսի 4-ին) և այլն, Անգլիայի ու Ֆրանսիայի պնդամակաների գեկավարությունը Համաշխարհային իմպերիալիզմի դրծած այլ պրոլետացիոն արարքները բնորոշում են վերջին տարիների հակախորհրդային արշավի առաջին ետապը:

Համաշխարհային բութուաղիան այդ բոլոր հարձակումներով և մահափորձելով աշխատութ եր Համարերությունից հանել մեզ, բնդՀարում առաջ բերել մեր և այս կամ այն յերկրի միջև, պրովոկացիանիրի միջոցով պատերազմի դրդել մեզ: Կրովոկացիան շահագլիք:

Այդ առանձին յելույթներից, առանձին ժահակործից, առանձին հարձակումներից համաշխարհային իմպերիալիզմն անցավ մեր վեմ քողարկված ուղղմական պիտույքի, ողտագործելով չինական ուղղմական չըջմունքի, ողտագործելով և Զին-Արևելյան յերկաթուղուարձմանը: Զինական իմպերիալիզմները, առանց ողտագործմանը: Զինական հարձակարգելու մեջ, կատարեցին համաշխարհական հային բուրժուազիայի սոցիալական պատկերը, կենացային բուրժուազիայի սոցիալական դրանացըն իրենց զորքերը և սպիտակ-պարզիական ջորդացների մեջությունը և մի շարք հարձակումները գործեցին և ԱՄՀ-ի տերիորիայի վրա: Դա նոր հարձակումների յերկիրը սպիտակ շոշափելու մի ողջակի հուրդների մեջ, ու հարածուն հակախորհրդային արշավի յերկրորդ հուսան եր:

Նրանք այդ խանի ևս առևուլ տվին: Համաշխարհային իմպերիալիզմի հաշիվները սիրու դուրս յեկան:

Մեր քաջարի Հեռավոր Արենելյան Կորմիր բանակը, իսկական բայլչելիյան զարգածություն և մարտունակություն ցուցաբերելով, վճռական հակահարցում տվեց չինական սպիտակ բանդիտներին: Համաշվարչակին իմպերիալիզմի վերաբերյալ ընդունելի չհաջողվեց վաչ պատեհական բինորություններին չհաջողվեց վաչ պատեհական բինորություններին դիմ, վաչ ԽՍՀՄ-ի գետրազմի վրդել մեզ, Զինաստանի դիմ, վաչ ԽՍՀՄ-ի գետրազմի վրդել մեզ ուղղված ընդհանուր ուղղմական արշավի վերածել այդ պատեհական վաչ եւ «միջնորդի» դեր խաղալ այդ պատեհական վաչ միլիտարիստները հարկականի վերաբերյալ: Զինական միլիտարիստները հարկականի վերաբերյալ եյին ընդունել մեր պայմանները և վերականությամբ Զին-Արևելյան յերկաթուղուարձմանը կոնֆլիկտից առաջ գոյություն ունեցող կարգը:

Հակախորհրդային արշավի յերրորդ ետապը, վորը  
Համարյա զուգագիպում և վերոհիշյալ իմպերիալիս-  
տական արկածի վախճանին, վերաբերում և այն ըլլ-  
ջանին, յնոր կապիտալիստական աշխարհում զարգացել  
ու իորացել եր տնտեսական ընդհանուր սուր ճգնաժա-  
մք: Դա համաշխարհային իմպերիալիզմի ռեժի ակ-  
տիվության ետապն եր, ակտիվության, վոր ցուցա-  
բերվում եր կապիտալիստական բոլոր յերկրներից մի-  
շաղգային հակախորհրդային բլոկ ստեղծելու ուղղու-  
թյամք:

1930 թվականի գարնանը կրօնավորների կիրառած  
խաչակրաց արշավանքը, ինչպիս և ներկայումս խոր-  
հրդային արտահանության դեմ ծավալիող միջադրա-  
յին արշավն առանձնապես ցայտուն կերպով բնորոշում  
և այդ ըջանոր, յերբ համաշխարհային գիշատիչները  
Խորհրդային յերկրի դեմ իրենց զործած առանձին  
յելույթիների սիստեմից անցնում են ԽՍՀՄ-ի դեմ աղն-  
ունական պատերազմի պլանաշափ տնտեսական ֆրոնտ  
կաղմակերպելու աշխատանքին՝ մեր յերկերը բլոկադի  
և ինսերիտեցիայի յենթարկելու նպատակով:

Այսպիս կոչվում «խորհրդային դեմպինդի» դեմ  
մղվող կամպանիան, չնայած նրա ամբողջ անհեթեթու-  
թյան (ինչպիս կուռեննք քիչ հետո), այլապատճ հան-  
գիտանում և մեր թշնամիների ծրագրած ստրանգիկի  
յելույթը ԽՍՀՄ-ի սոցիալիստական շինարարության  
դեմ, աշխարհի միակ պլուտոսական դիկտատու-  
րայի պետության հեղափոխականացնող ազդեցության  
դեմ:

## Ի՞նչ ե «ԴԵՄՈՒՆԴԸ»

«Խորհրդային դեմպինդի» առանպելը լոկ չի վա-  
րագույք և ԽՍՀՄ-ի դեմ պատրաստվող ռազմական  
արշավի համար: Ի՞նչ և դեմպինդը և ինչո՞ւ համեմա-  
պես այդ քողն և ընտրել համաշխարհային բուրժուա-  
զիան ներկա պահին՝ իր ռազմական նախապատրաս-  
տությունները սքողելու համար: Դեմպինդ խոսքը հա-  
յերեն բառացի նշանակում և ճանապարհից զեն գցելը՝  
միշտական: Համաշխարհային առևտրի մեջ այդ անշ-  
տիական բառը նշանակում և տպրանքների վաճառումն  
արտասահմանյան շուկայում ավելի եժան գնով, քան  
ներքին շուկայում: Դեմպինդը մրցության պայքարի  
մին, ամենազործածական միջոցն ե, վորը բախորհն  
կիրառվում եր և կիրառվում և կապիտալիստական  
բոլոր յերկրներում:

Դեմպինդն առանձնապես լայն չափով են զործա-  
ծում կապիտալիստների ներկայիս մոնոպոլիստական  
այլ խմբավորումների դեմ իրենց մղած պայքարում:  
Կապիտալիստներն առավելագույն չափ բարձրացնե-  
լով զնեցն իրենց յերկրի պղանուների համար, սովորա-  
բար հարավորություն են ստանում ապրանք արտա-  
հանել մյուս յերկրները առևլի եւա նզնով՝ այդ յերկր-  
ների արդյունաբերության քայլացնեց վեհական ստացած վնասնե-  
րը ծածկում է ամենաբարձր մերկու վոր ստանում են



իրենց յերկրի սպառովի հյութը ծծելով։ Վորպեսզի կարստանան հետությամբ դլուխ բերել այդ, նրանք իրենց կառավարության միջացով սահմանում են բարձր մաքսիք, իրենց ներքին շուկայում պաշտպանում են իրենց ուսարերկույա մրցությունից և գրանով իսկ յերկրում, գների ասպարիզում, դառնում են տեր ու տիրական։

Կարիք կա՞ խոսելու, թե վորքան անհեթեթ և վորքան անընդունելի յին տակորի այդ յեղանակները մեղ համար։ Մեր անտեսավարժան ձեմքերը պլանային են։ Մենք վոչ միայն պլանաչափ ենք արտադրում ապրանքը մեր յերկրում, այլև պլանաչափ բաշխում ենք։ Մենք ինավ համակրանք չենք տածում կապիտալիստական աշխարհին, վոր մեր ապրանքներն ինքնարժեքից պակաս վաճառենք նրանց, վորովհետեւ այդ կնշանակեր, վոր մենք համաշխարհային գիշատիչներին տալիս ենք ապրանք արտադրելու համար մեր զործադրած ոշխառնիքի ու ծախսած միջոցների մի ժամար։

Մենք անշեղերոն պայքարում ենք ինքնարժենքն իշխնելու համար, վորպեսզի մի կողմից լրացուցիչ միջոցներ սուանանք յերկիրն ինդուստրացնելու և դյուզանակությունը առցիւլիստական վերակառուցման յենթարկելու համար, իսկ մյուս կողմից՝ վորպեսզի սպոողների հիմնական մասսան ԽՍՀՄ-ի աշխառավորները, կարողանան ամելի հժամանակով ստանալ ապրանքը, վորպեսզի դրանով իսկ բարձրացնենք իրական աշխառավարձը։ Յեվ յիթե մեր ապրանքները համաշխարհային շուկայում մրցունակ են գուրս գալիս, ապա այդ ուեզիք յեւնենում վոչ թե այն պատճառով, վոր մենք դրադվում ենք դեմքինդով, այսինքն՝ ապրանքը վա-

հառում ենք ինքնարժեքից սածը գնով, վնասով, այլ այն սպատառով, վոր անասեավարման մեր ձեմքերն, աշխատանքի մեր սիստեմը, համեմատած կապիտալիստականի հետ, հսկայական առավելություններ ունի։ Մենք միջոցներ չենք ծախսում ուեկլամի վրա, մենք կորուստներ չունենք տնտեսության առանձին ճյուղերի և առանձին ճնունարկությունների մրցումից, վորովհետու մեզանում մրցություն չկա։ Մենք գուրս վորն զեցինք գործարանատերերին և կալվածատերերին, վորովհետու պակաս առաջին մոտ արտասովոր ոռնիկներ չեն արվում ձեռնարկությունների դիրեկտորներին և հիմնարկների զեկավարներին, մենք հողատար տնտեսներ ենք և դաֆանորեն կովում ենք ամեն տեսակ շաբաթությունների ու անտընտեսավարության դեմ։ մեզանում գոյություն չունի գերարտագրության անարխիա։ Տնտեսավարման մեր ձեմքերը նույնիսկ այժմ, յեր մենք վեռ գտնվում ենք յերկրի ինդուստրացման և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման, պրոցեսում միայն, արգեն իսկ մեղ հնարավորություն են տալիս համայնշաբարհի առաջ ցուցադրելու մեր առավելությունները, վորով բարձրացնում ենք բանվոր գասակարգիք և գյուղացիության հիմնական մասսաների բարեկեցություններ և վոչ թե գերշահույթ ենք ստեղծում մի բուռն շտագործողների համար։

Մեր արտահանության նկատմամբ «զեմպինչ» բառը վոչ այլ ինչ է, յեթե վոչ մի մանյովք համաշխարհային իմպերիալիստների կողմից, վորոնք այդ միջոցով վործում են իրենց յերկրի ապահնակության առաջ արդարացնել իրենց արտադրության անտրիխան։

իրեաց անսխատեմությունը : Համաշխարհային բուրժուազիան «խորհրդային դեմպինգին» վերաբերյալ իր կեղծավոր աղաղակիներով փորձում և համաշխարհային ճշնաժամկեր պատասխանատվությունը բարդել Խորհուրդների յերկրի վրա , ապացուցել—վարտեղ հրանքավոր և և վարտեղ հաջողվիր ։ Վոր չքավորությունն ու դործուղիւթյունը , քաղաքների և գյուղերի միլիոնավոր մասսաների սովոր , Սրեմելքի զաղութային ժողովուրդների սորքացումը՝ այս բոլորն իրենի թե տեղի յի ունենում վոչ թէ «մարդասեր» չահագործողների ժեղքով , այլ «քաղաքակարթության և դեմոկրատիայի կործանիչների» բայլշեքիկների մեղքով և «անրարիխիզ խորհրդային մրցության» պատճառով :

«Խորհրդային դեմպինգի» առասպելը վոչ այլ ինչ և , իիթի վոչ «խաչակրաց արշավանդի» նոր հրատարակությունը : Դա այն պլատֆորմն է , վորի վրա ԽՍՀՄ-ի դեմք ծրագրվող ռազմական ինտերվենցիայի նախաձեռնողները՝ իմպերիալիստական ֆրանսիայի դիմավորությունը , աշխատում են խոշոր և վորք կազմականական պետությունների միանական բոլոկ կերտել մեր դեմ :

«Խորհրդային դեմպինգի» առասպելը հերթական մի փորձ և ԽՍՀՄ-ի դեմ տնտեսական բոլոկ ստնդծելու և դրանով իսկ հարված հասցնելու հնդամբակի իրականացմանը :

Տնտեսական բոլոկը համաշխարհային պատերազմի ժամանակի իմպերիալիստների փորձած կողմից զենքն և մի պետության դեմ , վորի կողմն ուղղված և նա : Բարձական և վերհշել Գերմանիայի մեկուսացումը , վոր կիրտուել եյին գաշնակիցները պատերազմի տարի-

ներին , վոլովեազի հասկանութիւնի , վոր այդ մերկը դեմ նրանց սահմանած բոլոկան նպատակ ունեք զըսկել նրան ժաշտունակաթյունից : Քաղաքացիական պատեհազմի ժամանակ Խորհրդային Ռուսաստանի զեմ կազմակերպված տնտեսական բոլոկագով համաշխարհային իմպերիալիզմը փորձում եր հասնել մեր վերաբերմամբ ևս նույն նպատակին : ԽՍՀՄ-ի աշխատավորները շատ բավ են հիշում այդ բոլոկը և նրա նախաձեռնողներին՝ Ֆրանսիայի , Անգլիայի և Հյուսիսյային Ամերիկայի Միացյալ Նահանգների իմպերիալիստներին : Այդ շատ բավ են հիշում նաև բոլոր յերկրների բանվորները : Կապիտալիստներին չի հաջողվի «փորհրդային դեմպինգի» առասպելով , խորհրդային արտահանության դեմ ծավալված արշավով , թագցնել ԽՍՀՄ-ի զեմ պրոլետարիատի գասակարգային թշնամիների կողմից պատրաստվող այդ նոր պատերազմի բուն իմաստը :

Կապիտալիստական ամբողջ սիստեմի անկումային վիճակի , նեխալող , մահամերձ գալարումներով բանվաճկապիտալիզմի դեմ՝ ճանդիման կանգնած և սոցիալիզմի հաղթական քայլերով առաջ ընթացող շինարարությունը : Կապիտալիստական ամբողջ աշխարհում արնատեսական ճիշճամբամն առաջ և բերում հեղափոխական շարժման ամենալայն ալիք , վորը զնալով ավելի ու ավելի սպառնալից և դառնում : «Համաշխարհային իմպերիալիստներին չի հաջողվի «փորհրդային դեմպինգի» հետին պահանջներով մոլորկեցնել բանվորական մասսաներին և քայլայի գայուղացիությունը , չի հաջողվի համոզել նրանց , թէ խորհրդային արտահանությունը հանդիսանում է կապիտալիստական աշխարհի

աշխատավորության չքավորության և թշվառության  
հիմնական պատճառը:

«Եսոքհրդային ղեմպլինդի» առասպելը կմերկացվի  
և արդեն մասամբ մերկացվել և այնպես, ինչպես ժա-  
մանակին մերկացվել եր կրոնավորների կամպանիան և  
ԽՍՀՄ-ի ղեմ ուղղված «խաչակրաց արշավանքը»:

## ԻՐԵՆՑ ՄԵՂՔԸ ՈՒՐԻՇԻ ՎԶԻՆ

Այժմ ավելի քան յերբեմիցեւ պարզ է, վոր 1914—  
18 թվականների համաշխարհային պատերազմը սոսկ  
առաջին ետաղն եր իմպերիալիստական համաշխարհա-  
յին ընդհարումների: Դրանից հասկանալի յեւ, թե ին-  
չու ախարհի բաժանումն ավարտելու անզոր իմպե-  
րիալիստական բուրժուազիան, պատերազմը վերջանա-  
լուց հենց ոնմիջապես հետո, կանշնեց նույն հարցերի  
առաջ, վորոնք ծնել եյին համաշխարհային սպանդը:

Դեռ նոր եյին գաղարել ղողանչելուց 4-ամյա սրա-  
ակազմից հետո խաղաղությունն ավեսող զանգերը,  
յերբ իմպերիալիստական գլխավոր պետությունների  
մրցությունն ու հակամարտությունը բոցավառվեց նոր  
ուժով և այս անգամ միանդամայն նոր պայմաններում,  
վորոնք արդյունք եյին փոխած համաշխարհային  
եկոնոմիկայի:

Մենք կանգ չենք առնի պատերազմից հետո իմպե-  
րիալիզմի անցած ետաղների վրա, մատնանշենք մի-  
այն, վոր հետպատերազմյան կապիտալիզմի ընդհանուր  
ճգնաժամի ներկա շրջանը միջազգային հակասություն-  
ների այնքան սրված ետապն է, վոր ավելորդ և համե-  
մատել նրանց սրությունը նախորդ տարիների հակասու-  
թյունների սրության հետ:

Այժմ ավելի, քան յերբեմիցեւ խորացել և սրվել են  
համաշխարհային գիշատիչների շահերի հակասու-

թյունները և նրանց փոխադարձ պայքարը սպառման ու հումուզի շուկաների համար, կապիտալի գործառնորման շուկաների համար։ Այժմ ավելի, քան յերսելից սրբի են առանձին խմորերի այստական պետությունների և գաղութային ու կիսագաղութային յերկըրների ընդհարումները։ Ներկայումս ծայրահեղ ըսրավածքայի և բանվոր դաշտակարգի պայքարը բուրոր յերկրներում։ Ինչպես առաջինք, առանձնապես ցայտուն և սուր կերպով արտահայտից անտեսավարժան արդի յերկու սիստեմների աճող սոցիալիստական և նեխվող կապիտալիստական սիստեմների հակամարտությունը։

Մեր նպատակը չեմ մանրամասն վերլուծման յենթարկել միջազգային դրությունը, ինչպես և մանրամասն վերլուծել կապիտալիզմի արդի ընդհանուր ճգնաժամի պատճառները։ Մենք կմատնանշենք միմիայն այն սոմենտները, վորոնք ողտագործում են կողերի այստական գործուազիան, փարձելով արդարացնել արտադրության կապիտալիստական սիստեմի անարխիան, քողարկելով իր գիշատիչ դիտավորությունները «խորչըրդային դեմոկրին» վերաբերյալ կեղծավոր աղաղակներով։

Կապիտալիստական ամբողջ աշխարհն համակած ներկայիս անտեսական ճգնաժամը գերարտադրության ճշնաժամ է։ Հետպատերազմյան ըջանում համաշխարհային շուկաների աճման տեմպը զգալի չափով հետ և մուռմ մինչպատերազմյան ըջանի աճման տեմպից, այնինչ ապրանքների և գյուղատնտեսական մթերքների համաշխարհային արտադրությունը զգալիորեն

գերազանցում և այն քանակից, վորն ընդունակ է ըստուել համաշխարհային շուկան։

Բայց առանձնապես բնորոշ և կապիտալիստական աշխարհում տեղի ունեցած սարուկուրային փոփոխությունը։ Համաշխարհային եկոնոմիկայի ծանրության կենարուն անցել և զյուսիսային Ամերիկայի Մխացյալ Նահանգներին։ Համաշխարհային շուկաներում առաջին գերը խաղացող Անգլիան հարկադրված է առաջնությունը զիջել իր ավելի ուժեղ մրցակցին։ Համաշխարհային պատերազմի տարիներին գաղութային յերկրները վրաց գրին ինքուստրացման ուղին և զգաւել չափով ընդարձակեցին իրենց սեփական արդյունաբերությունը։ Բայց բայց աղքատացած Յեվրոպան զղագիւրն կորցրել և իր գնուզունակությունը։ Համաշխարհային սորբունքաշընառության նախկին ամրող սիստեմը փոփոխի և չորրհիմ Յեվրոպայի վերաձելման, չորրհիմ յեվրոպական կոնտինենտի տերիտորիայի վրա բազմաթիվ պետությունների սուեզման, վերջապես, չորրհիմ այն հանգամանքի, վոր աշխարհիս մի վեցերորդ մասը՝ Խորհուրդների յերկիրը, Հոկտեմբերյան հեղափոխության հանդիպով, զուրս և յիկել կառիքայիստական տնտեսության ամբողջ սիստեմից։

Յեթէ կապիտալիզմի համեմատաբար կայուն ըլլունայում, այն ըջանում, յերբ չյուսիսային Ամերիկայի Մխացյալ Նահանգները պարծենում եյին իրենց «ծաղկման» գարադիմով, այն չըջանում, յերբ սոցիալ-ֆաշիստներ և նրանց հետ միասին կոմունիզմի բոլոր ունեպատերը, թմբկահարում եյին «կազմակերպված կապիտոլիզմի» «արժանիքների» մասին, խորը հակա-

սություններ կային ապրանքների արտադրության աճաման և շուկաների արարողության միջև, ապա կարելի յելլիվ սկառկերացնել, թե վորքան են սրվել այն հակառությունները և մրցության պայքարը, վորոնք առաջ են գալիս ներկայումս արդի տնտեսական ճզնաժամկի բազայի վրա:

«Ներկա ճզնաժամը—ասել եր ընկ. Մոլոտովը ՀԱՄ. կ. (բ) Կ.-ի 16-րդ համագումարում իր տված գեկուցման մեջ—առանձնապես ուժգնորեն գերպատեկցիոնիզմի յև մղում կապիտալիստական յերկրները։ Պրոտեկցիոնիստական տենդենցների աճումն յերեվան և գալիս ամենուրեք։ Այդ ուղիով են ընթանում վոչ միայն յերկրորդական կապիտալիստական, այլև ամենահզոր կապիտալիստական՝ յերկրները։ Բնորոշ ե, վոր Ամերիկան առաջինը վոտք գրեց պրոտեկցիոնիստական ժաքսելն ել ավելի բարձրացնելու ուղին։ Այդտեղ վերջերս վորոշում ե ընդունվել՝ բարձրացնել գյուղտուցնակեռության միերքների, ուղարկությունների և քիմիական արդյունաբերության ապրանքների մաքսերը։

Մաքսերի այդ նոր բարձրացումը հասնում է 30-35 տոկոսի։ Գնայած վոր Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների այդ վորոշման դեմ բողոքեցին ամերիկյան շուկայով շահագրդուված 34 պետություններ և չնայած վոր Ամերիկայի հաղարից ավելի տնտեսագետներ աննպատճակաչուրմար ելին համարում այդ միջոցը, — այնուամենայնիվ մաքսերի բարձրացումն ընդունվեց։ Ի պատսօխան՝ դրան, հակամիջոցների յեն ձեռնարկում նաև մյուս պետությունները՝ կանադան, Ֆրանսիան և այլ պետություններն արդեն բարձրացրել են իրենք մաքսերը։

Այս խոսքերն արտասահնվել են 1930 թվականի հուլիսի սկզբներում։ Դեռ մի քանի ամիս ել չի անցել և ահա մաքսային պատերազմը դարձել ե գնալով սըսավոր մրցության պայքարի արտահայտման ամենացայտուն ձեվերից մեկը իմպերիալիստական աշխարհի յերկրներում։ Մոքսային այդ պատերազմի ուժեղացումն արտացոլում է ներկա ճզնաժամի ամբողջ խորությունը, համաշխարհային կապիտալիստական տնտեսությունների ամենա ամենը ամենի վերահանի մասին, հակառակությունների, վորոնք կուահում են աշխարհի բաժանման համար մզվելիք վերահան իմպերիալիստական պատերազմը։

Մաքսային պրոտեկցիոնիզմը հանդիսանում է ներքին շուկան պաշտպանելու հին միջոց, վորի նպատակն ե բարձրացնել այնուեղ գները և հնարառվորություն ունենալ եւ անացրած զներով այլ յերկրներ նետել սեփական ապրանքը։ Սակայն յեթե արդեն անցյալում պրոտեկցիոնիզմը հանդիսանում եր յերկասոյրի սուր, ապա ներկայիս համաշխարհային ընդհանուր տնտեսական ճզնաժամի պայմաններում, մաքսային տուրքերն անց գոր հանդիսացան բարձր պահելու զները ներքին շուկայում, անզոր հանդիսացան դուրս բերելու կապիտալիզմը վահանաւուց :

Մենք վերի մատնանշեցինք Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների պրոտեկցիոնիզմը։ Ամերիկյան կառավարության ներմուծած գյուղատնտեսական մթերքների պրոտեկցիոնիստական տուրքերը պաշտպանեցին արդյոք այդ յերկրի հացի գները հե-

տագաւա անկումից : Դրա մասին դատելու համար մի քանի թվեր բերենք Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում ցորենի զների փոփոխման մասին (մի բուշելի<sup>1)</sup> դինը ցենտով) .

1930 թ. Հունվար	118
1930 թ. Հոկտեմբեր	71

Ինչպես տեսանք, մաքսային բարձր տուրքերը չիրկեցին Մանիարի Հիմնալի ցորենը զների անկումից : Մաքսային արդիկանին անողոր հանդիսացան համաշխարհային առջարային ճգնաժամի հանդեպ, վորն առաջ և թիրում վոչ միայն հացի զների անկում, այլև լուրջ խմբում կազմակերպությունների քայլայն գյուղացիական մասաների մեջ : Այդ զժողությունն ավելի ու ավելի սպառնալից և գաղնում : Ամբողջ աշխարհի և Արևիկերի գաղութային ժողովուրդների մեջ ճեղարկության շարժման անձնան հետ միասին, քայլայն գյուղացիական մեջ անզի ունեցող խըմորման մեջ ուղղակի վտանգ և թաղնված գոյություն ունեցող կազմակերպության համար :

Ան թե վրանեղ են թաղված «խորհրդային գեղաշինությալ վերաբերյալ վունոցի բուն արմատները :

Զանյած պրոտեկտինիստական մաքսերին, համաշխարհային շուկայում զները դեպի ցածր են իշխում : Այդ տեղի յեւ ունենում այն պատճառով, վոր հացի համաշխարհային արտադրությունը դրային ամերիկայի յեւ համաշխարհային պահանջից : Այդ յերեսում և հետեւալ տվյալներից :

Ցորենի համաշխարհային արտադրությունը (բաց առյալ հԱՀՀՄ-ն), չնայած վոր արդեն յերկու տարի

<sup>1)</sup> Մի կլինոսում հագասար և մի ցհուաների կոմ 100 կիլոգրամի:

շարունակ կապիտալիստական մի շարք մերկներում ագիտացիա է մզգում ցանքսերի կրծառման համար, այս տարի անցյալ տարվանից շատ ամենի բարձր եւ Համաշխարհային շուկաներն արտահանողներին չողնեց նաև այս տարիվ չոր յեղանակելը, վորի մրա ամբողջ հույս ելին դրեւ : Համեմի ագրարային ինստիտուտի պաշտոնական տվյալների համաձայն, այս պարի ցորենի արտադրությանը հասել է 970 միլիոն կվինտալի՝ այսինքն 50 միլիոն կվինտալ ամենից, քան անցյալ տարի :

Ինչպես յերեկում ե այս տարի ամբողջ աշխարհում գոյություն ունեցող ցորենի ավելցուկներին վերաբերյալ ավյալներից, վոր համաշխարհական մեր մամուլում, այդ ավելցուկը մոտ մեկ և կես անգամ ավելի յէ անցյալ տարվա ավելցուկից : Սակայն անցյալ տարի ույզ ավելցուկն այնքան մեծ եր, վոր իր ամբողջ ծանրությամբ ճնշում եր համաշխարհային հացի զները : Այս տարի ցորենի համաշխարհային ավելցուկը կազմում է 159 միլիոն կվարտար<sup>2)</sup>, վորից 108 միլ. կվարտարը կազմում է ընթացիկ տարիվա ավելցուկը և 51 միլիոն կվարտերն անցյալ տարվա մնացորդը : Խոկ ցորենի համաշխարհային ամբողջ պահանջը Յերսովայում կազմում է 79 միլիոն կվարտեր, վոչ յերբուքական յերկրներում՝ 15 միլիոն կվարտեր, և ընդամենը 96 միլիոն կվարտեր :

Այս ավյալներն առանձնապես ցայտուն կերպով վրա կայում են համաշխարհային գյուղատնտեսության ապրած ճգնաժամի մասին : Դրա պատճառն է համաշխար-

<sup>1)</sup> Մի կլինոսում հագասար և մի ցհուաների կոմ 100 կիլոգրամի:

<sup>2)</sup> Մի կվարտերը հավասար է 11,3 կիլոդրամի:

հային գյուղանտեսության արտադրության անարդիքան : Այդ բոլորից հետո արտառող և կեղծավոր փորձ և հայտարարել, թե ԽՍՀՄ-ն, վորը 1928 թվականին արտաքին շուկա յի հանել ցորենի համաշխարհային արտահանության միմիայն 0,007 տոկոսը, իսկ այս տարի, ավելի ճիշտ՝ այս աշխանը, միայն վերսկսել և քիչ թե շատ զդալի քանակությամբ իր հացի արտահանումը, — վորեւ չափով կարող է պատասխանատու լինել համաշխարհային հացի զների անկման համար : Նման հեքիաթներին կարող են հավատալ կապիտալիստական յերկրների ազգաքնակության ամենահետամբնաց, անկրաղեկ խավերը : Մինչպատերազմյան շրջանում ցարական Թուսաստանն արտահանում էր համաշխարհային շուկա հանվող ամբողջ ցորենի  $\frac{1}{4}$  (24,8 տոկոս) : Բայց այն ժամանակ վոչ վոք չեր աղաղակում սուսական հացահատիկային գեմոլինդի մարին :

Դրա պատճառն այն է, վոր խորհրդային հացահատիկային «գեմոլինդի» մասին աղաղակելով, համաշխարհային բուրժուազիան վործում և թագցնել թե իր գեմոլինդային սպերացիաները և թե իր իմպերիալիստական պատրաստությունները Խորհուրդների յերկը դեմ ուղղված նոր ինսերվենցիալի համար :

Վերցնենք նույն այդ Հյուսիսային Խերիկայի Միացյալ Նահանգները : Միթե չինուկան չուկան ներկայում առասպելորեն հետապնդին ցորենով հեղեղող այդ յերկը գեմ չե՞, վոր բաղոք և բարձրացել Զինաստանում : Ինչպես հաղորդում է Շահնշայում լույս տեսնող անդլիսական «Նորդ չայխ դելլի նյուզ» թերթը, հոկտեմբերի սկզբներին չինուկան մի շարք նոհանդների գյուղական հռմայնքների 500 ներկայացուցիչներ իրենց

կառավարությունից պահանջել են վճռաբար պայքար մղել ամերիկյան հացահատիկային դեմոլինդի գեմ :

Միանդամայն ստուգված ավալիաների համաձայն, Ամերիկան 1930 թվականին իր հացն արտահանել ենք նարժեգիր մոտ 30-40 տոկոս ցածր գնով, ընդ վորում այդ ինքնարժեգիր մեջ չեն մտցված առեվտրական և վերադիր ծախսերը, չեն մտցված փոխադրության ծախսերը : Ինչո՞ւ ուրեմն համաշխարհային բուրժուական մամուլը, ու նախ և առաջ ամերիկայինը, այդքան նախանձակինդրությամբ լրության են մատնում ամերիկյան այդ կատաղի հացահատիկային դեմոլինդը :

Մեր հացը միանգամայն մրցունակ են նույնիսկ այժմ : Մեզ մոտ ԽՍՀՄ-ում չկան այն վերադիր ծախսերը, վորոնք զոյտություն ունեն կապիտալիստական յերկրներում : ԽՍՀՄ-ում հացի մթերումը գտնվում է պետության ձևորդին : Մենք կապիտալիստական յերկը ներն արտահանում ենք մեր հացի միայն ավելիորշ մասը : Մենք կարգավորում ենք ներքին պահանջը, սպառումը և պլանայնորեն հայթայթում ենք ազգարնակությանը : Մեզ մոտ ԽՍՀՄ-ում չկա հողային ունատու, վորը թանգացնում է հացի արտադրությունը : Մեզ մոտ սպեկուլատիվ տոկոսներ չեն դրվում գյուղատնեսությանը արվող վարկերի վրա, բայց չե՞ վոր սպեկուլատիվ տոկոսները սարկացնում են կապիտալիստական յերկրների գյուղացիներին և ֆերմերներին : Մեզ մոտ ԽՍՀՄ-ում չկան հացի գինը սպեկուլացիայի առարկա գարձնող բորսային մակերներ և արտահանող ֆիբրաներ : Մեզ մոտ ասպարեզ չկա ցորեն դնողների և վերավաճառողների սպեկուլատիվ դործողությունների համար, իսկ չե՞ վոր կապիտալիստական աշ-

խարչի յերկրությը մի յեն նրանցով։ Յեզ հարկավ մէնք ինքներս ամենից քիչ ենք շահագրգռված տեր հացն ինքնարժեքից ցածր գնով վաճառելու։

Վոր այս արդարու են, ցույց են տալիս հետեւյալ տվյալները։

«Հավառ» գործակալության Մարսելում հրատարակող «Յովիային առևտրական բյուլետենի» հաղորդագրությամբ<sup>2</sup>), Ահ ծովի նավահանգիստներից արտահանված խորհրդային հացի գինը Մարսելում, 1930 թվականի հունվարի 10-ին, ավելի բարձր էր, քան մերձգանուրյան հացի գինը։ Մինչդեռ մեր հացը առ 10-ն հոկտեմբերի (30 թ.) Մարսելում գնահատվում էր 110-115 անդիմական շիլլինգ մի տոննը, մերինի հետ հագասար վարակ ունեցող ուռւմիսական հացի տոննը վածառվում էր 111 շիլլինգի։ Ո՞վ է ուրեմն կիրառում գեմպինը։

Համաշխարհային բուրժուազիան խորհրդային արտահանության դեմ իր մզում պայքարում նախ և առաջ հարվածում և արտառահմանում խորհրդային ասպանք սպասողների շահերը։ Թւոտի, զարժանալի չն, վոր անդիմական մամուլը, ինչպես հազորգել էր Ժիզվետիայի թղթակից ընկ։ Զենքինը, լուսթյոն մասնեց Անգլիայի ազարակատերերի պատասխանն այն հարցին, թէ ի՞նչ վերաբերժումն են ցույց տալիս նրանք մեր հացամթերքի ներմուծմանն Անգլիա։ Պարզ-փեց, վոր հարցում սատած ազարակատերերի դերակառող մեծամասնությունը (94 տոկոսը) հազորգել էր պրական վերաբերժունքը մեր հացամթերքի ներմուծ։

<sup>1)</sup> Ցես մեր կենտրոնական մամուլում առետրի ժողկամի ակնականը ընկ։ Ա. Պ. Ռոզենհոլցի զբույցը։

մասն Անգլիա, մատնանշելով, վոր այդ ներժուածում մեծ ոգուած և տալիս նրանց։

Այս, ինչ վոր ասացինք հացի արտահանության ժաման, նույնչափ վերաբերում են նաև մեր արտահանության մյուս առարկաներին։ Կապիտալիստական աշխարհը վոչ մի բոպն ըպետք և մոռանա, վոր մենք վոչ միայն արտահանում ենք մեր ապրանքը, այլև ներմուծում ենք մեր յերկրութեալ մեզ համար անհրաժեշտ մեծ քանակությամբ արտադրության գործիքներ ու մեքենաներ և ամեն տեսակ նյութեր շինարարության համար, ինչպես և զգալի քանակությամբ հումուլյյ՝ մեր արդյունաբերության համար։ ԶԵ վոր միմիայն 1928-29 տնտեսական տարում Անգլիայից մենք ներմուծել ենք 44,3 միլիոն ոռոքու ապրանք, Ամերիկայից՝ 152,9 միլիոն ոռոքու, Գերմանիայից՝ 188,4 միլիոն ոռոքու, Ֆրանսիայից՝ 30,4 միլ., ոռոք. ապրանք։ Իսկ 1929-30 տարում զգալի չտիով ավելացել են մեր ներմուծումը։

Համաշխարհային ամբողջ ըրջանառության մեջ մեր արտահանությը կազմում է ընդամենը մոտ 2,2 տոկոս։<sup>1)</sup>

<sup>1)</sup> Գերմանիայի պաշտոնական վիճակագրական որգան՝ Գերմանական պատառքի ստատիստիկա ժուրնալի 1930 թ. 15-րդ համարի տվյալներով, 1930 թվականի առաջին յեռամյակում արտահանումը կազմել է՝

Ավելուական 25 յերկրներում 14,7 միլիոնդ գերմ. մարկ  
Բնդրծովյան 25 յերկրներում 12,1 » » »

Հնդկանը 90,8 միլիոնդ գերմ. մարկ։

Նույն ժամանակամիջոցում ԽՍՀՄ արտահանել ն 800,8 միլիոն գերմանական մարկ, վոր կազմում է 50 յերկրի ընդհանուր արտահանության 2,22<sup>0</sup>,6-ը։

«Դեմպինգ»ի առանցքելը-2

Մի՞թե կարելի յի շորտնակն այն զրապարտությունը, թե մեր արտահանումը համաշխարհային ճյլը նախամի հիմնական պատճառն է:

Այդպես աղաղակողներն իրենք են զբաղված զեմապինգով: Լեհաստանը Լատվիային կերոսին և վաճառում 100 կելոդրամը 11 լատ 30 սանտիմով, իսկ իր յերկրում, Լեհաստանում այդ կերոսինը վաճառվում և 28 լատ 20 սանտիմով, այսինքն՝ մոտ յերկու և կես անգամ թանգ: Գերմանիան ֆրանսիայի շուկաներում պարարտացման համար ազու և վաճառում ցննաները<sup>1)</sup> 5 մարկով, իսկ իր յերկրում, իր գյուղացիներից նույն քանակի համար գվալում և 12 մարկ: Ֆինլանդիան իր տեքստիլ ապրանքները Լատվիայում վաճառում և 15-20 տոկոս ավելի եժան, քան իր ներքին շուկայում: Չեխո-Սլովակիան իր վոտնամաններն արտասահմանում 12 տոկոսով ավելի եժան և վաճառում, քան իր յերկրի սպառույն և այլն, և այլն: Կարելի յեր մեջ բերել իրերի իսկական դրության վրա լույս սփռող և մեր արտահանման վրա կատարվող հարձակումների կեղծ ու սաահող բնույթն ապացուցող անթիվ որինակներ:

Իր սեփական հակասությունների մեջ խճճած համաշխարհային խմբերի ալիստուական բուրժուազիան իր գիշատիչ մարդիները մնենում և դեպի խորհրդային շուկան: Նա «խորհրդային դեմպինդի» առթիվ վոռնալով, փորձում և թաղցնել տնտեսավարման կամիստալիստական սիստեմի մասնակությունը, փորձում և վարժագույն պատերազմի խմբերիալիստական նախապատրաստումը:

1) Մի ցենաները հավասար և 100 կիլոդրամ:

## «ԽՈՐՀՈԴԱՅՐ» ԴԵՄՊԻՆԳԸ ԻՆՏԵՐՎԵՇՎԱՅԻ ՊԱՏՐՎԱԿ Ե

### ՖՐԱՆՍԻԱԾԻ ԴԵՐԸ

Յեվրոպայում խորհրդային հացի արտահանման դեմ ուղղված արշավում առաջին գերն և խաղում իմաստերիալիստական ֆրանսիական խմբերիալիստիանի Պան-Յեվրոպայի նախագիծը վիճելուց հետո, բլոկ և կերտում Յեվրոպայի ազգարային յերկրներից (Մերձականուրյան և ծայլերկրային), հենվելով իր վառալների՝ Լեհաստանի, Ռումինիայի ու Հարավ-Սլավիայի վրա:

Համաշխարհային պատերազմից հետո ֆրանսիան դարձավ Յեվրոպայի ամենաուժեղ խմբերիալիստական պետություններից մեկը: Նա ստացավ մի շարք խոշոր առավելություններ, վորոնք բարձրացրին ֆրանսիական խմբերիալիզմի գերը Յեվրոպայում: Ֆրանսիայի անմիտական տնտեսական շահերը յերբեք չեն կարող տուժել մեր արտահանության աճմատք, քանի վոր համեմատար աննշան տեղ են բոնում ֆրանս-խորհրդային առետրական փոխարարերությունները: Դրանից պարզ ե' վոր այդ ամբողջ հակախորհրդային կամպանիան, վորը պլիսավորում և ֆրանսիական խմբերիալիզմը, ֆրանսիական բուրժուազիայի այդ ամբողջ աղաղակը վասրաբրդային դեմպինդի» մասին, ինչպես և հակախորհրդային բյու ստեղծելու նրա կազմակերպչական ամբողջ

դործունեյությունը հանդիսանում է բացահայտորեն արտահայտված հակախորհրդային քաղաքական կամպանիա:

Դրա մասին պերճախոս վկայություն և տալիս Փրանխական առևտորի մինիստր Ֆլանդինի գործունեցությունը, զորն ուղեվորություն և կատարում Յեղոպայի յերկրներում և հակախորհրդային արշավի մասնակիցներ հավաքում: Այդ մինիստրը Վիեննայում վրույց ունենալով մամուլի ներկայացուցիչների հետ, հետեւյալ խոսքերով և բնորոշել կենտրոնական և Արեվելյան Յեփրոպայում իր կատարած ճանապահուրդության նպատակը:

«Ընդհանուր ճշնաժամի ներկա պահին, բոլոր յերկրների շահերն այնքան հար և նման են, վոր ճշնաժամը հնարավոր և լուծել միմիայն միասնական պլանով: Մակայն պրոբլեմի ընդհանուր լուծման նախադրյալն և՝ համաձայնություն կայտացնել առանձին յերկրների միջև՝ նայած նրանց արտադրության և ապրանքաշրջանառության բնույթին».

Ֆրանսիայի ներկայացուցիչն անհրաժեշտ չհամարեց Վիեննայում բացելիքաց հայտարարելու ԽՍՀՄ-ի վեմ իր կերտած ադրաբային ըլոկի բուն նպատակների մասին, սակայն այդ այնքան ել եյական չե: Ֆրանսիական կառավարության զործողությունները, նրա ընդունած զեկրետը՝ խորհրդային ներմուծման համար հատուկ թույլտվությունների սիստեմ սահմանելու ժամկե, իրենք են վկայում իրենց մասին:

«Հավաս» գործակալությունը հոկտեմբերի 22-ին, հաղորդեց Փրանսիական կառավարության հետեւյալ վորոշումը:

«ԽՍՀՄ-ից ներմուծվող ապրանքների վրա վերահսկողություն սահմանելու գեկրետի իրականացումն ապահովելու նպատակով, հետեւյալ ապրանքները պետք ե տեղեկանք ունենան իրենց ծագման մասին՝ կենդամբ թույլտները, մորթած թույլտները, ներառյալ նաև աղավնիները, հացարույսերը և նրանցից պատրաստված չափարը, պատոկան (դոչաբը), սովորական փայտը, բացի թղթի մասսա արտադրելու համար հատկացած ձյութատու փայտից, սոսինձը, ստեարինը, ժելատինը, ոլեինը, ոլեինի թթուն և ստեարինի թթուն:

ԽՍՀՄ-ից արտահանվող այն մթերքները, վորոնք տեղեկանքի կարիք չունեն, յենթարկվում են այն կանոնին, վորով նախնական թույլտվություն և պահանջվում: Այս բոլոր ճենարկումներն ուժի մեջ են մըտնում նոյեմբերի 25-ից»:

Ֆրանսիական կառավարության այդ հարձակումը խորհրդային արտահանման դեմ աղդանշան հանդիսացավ նաև այլ յերկրներում նույնպիսի արշավ սկսելու համար:

Ֆրանսիային անմիջապես հետեւյց թումբնիան: Նա շրջաբերական կարգադրություն հրապարակեց, վորով վերջնականապես արգելվում է թումբնիա ներմուծել 1930 թվականի հոկտեմբերի 15-ից հետո ստացված խորհրդային ապրանքները: Ֆրանսիայի որինակին հետեւյց նաև հունդարերին, վոր հոկտեմբերի յերկրորոր կիսին արգելված հայտարարեց ապրանքների ներմուծումն այն յերկրներից, վորոնց հետ չունեղարիան առեվտրական համաձայնություն չի կնքել: Այդ վորոշման մեջ, աչքի առաջ ունենալով ԽՍՀՄ-ն, ասկած ե, վոր այդպիսի յերկրներից թույլ ե տրվում

ապրանք ներմուծել միմիայն Փինանսների մինիստրի հատուկ վորոշմամբ։ Վերջապես հոկտեմբերի 25-ին բերդիական կառավարության պաշտօնական որդան «Մոնիթոր»-ում հրապարակվեց խորհրդային արտահանման դեմ ուղղված մի գեկրետ։ Այդ գեկրետն արգելում է Բելղիա ներմուծել և Բելղիայի տերիտորիայով փոխադրել ԽՍՀՄ-ում արտադրված և այնտեղից ուղարկվող հետելյալ ապրանքները։

1. Վարսակ, ցորեն, հաճար, զարի։
2. Մաննայա կրուպա, վերոհիշյալ մթերքներից պատրաստված կրուպա և ալյուր։

### 3. Գինիներ։

4. Վոսկրից, կաշուց, ջլերից և նման հումույթից պատրաստված սոսինձ, բացի ժելատինից և ձկան սոսինձից։

### 5. Ուեինի և ստեարինի թթուներ։

Այդ գեկրետն ուժի մեջ մտավ հոկտեմբերի 27-ին։ Վերոհիշյալ ապրանքները ներմուծելու համար պահանջվում է հողագործության մինիստրության թույլտվությունը, իսկ մի քանի դեպքերում՝ աշխատանքի մինիստրության թույլտվությունը։

Բավական է խորհրդային արտահանման դեմ ուղղված պայքարում ֆրանսիայի նախաձեռնությանը հետեւած յերկների այս ցուցակը, համոզվելու համար, վորար արդի գործին ձեռնարկել ևն այնպիսի յերկներ, վորոնք տնտեսապես փոքինչ կամ համարյա փոքինչ չեն կորցնում արդ քայլից։ Դեռ ամենին՝ շատ բնորոշ են նաև այն, վոր ԽՍՀՄ-ից ֆրանսիա ներմուծելու համար հատուկ լիցենզիա պահանջող մթերքների շարքում մենք չենք դանում նավթամթերք, վորը ֆրանսիա ու-

զարկվող մեր գլխավոր առարկան է։ Յեթե դադարեր մեր նավթի արտահանումը դեղի ֆրանսիա, դա մեծ հարված կհասցներ այդ յերկրի եկոնոմիկային։ Այս թե ինչու ֆրանսիական իմպերիալիստները բարվոք համարեցին լուություն պահպանել նավթի մասին։

Կառավարական այդ բոլոր յելույթներին նախորդել ելին ագրարային յերկրների մի շարք կոնֆերենցիաներ, վորոնք ստեղծվել ելին ֆրանսիական բուրժուազիայի նախաձեռնությունը և հետապնդում ելին մի նպատակ՝ ստեղծել ԽՍՀՄ-ի դևմ աղբարային բլոկ, վորպես ալնտեսական բլոկադի սկիզբը։

Յե՛վ Սինայյի աղբարային կոնֆերենցիան, և Վարչավայի, և Բուլարեստի աղբարային կոնֆերենցիաները բոլորն ել սոսկ առանձին ետապներն են ֆրանսիական իմպերիալիզմի կաղմակերպչական այն գործողությունների, վորոնք ուղղված են մեր վերև մատնանշված ճանապարհով։ Սինայյի կոնֆերենցիայից հետո, Բուլղարիայի արտաքին զործոց մինիստրության որդան «Միր» թերթը հետեւյալ հայտարարությունն արեց իր բնիքերցողներին։<sup>1)</sup>

«Յերբ նորհրդային նույսաստանը համոզվեց, վորաշնարհը բայց լինիկացնելու նրա մեթոդներն ապարդյուն մնացին, նա դիմեց նոր մեթոդի, այն եւ նա այժմ փորձում է կազմականացնել միջազգային շուկան և այդպիսով դժոհություն առաջացնել արտադրող մասնաների մեջ... Բայց կիյան հացը շուկա յեւ հանվում,

1) Քաղաքա՞նք «Коммунистический Интернационал» գուրնակ 1930 թ. սեպտեմբերի 10-ի 25-րդ համարից, էջ 18։

կարելի յե ասել, համարյա ձրի<sup>1)</sup> Հարց և ծագում  
էնչ պետք ե անի դյուղացին: Ի՞նչ և մնում անել, յեթե  
բայլեվիկները հարկադրում են նրան ձրի տալ իր մը-  
թերքները: Նա չի տեսնի իր աշխատանքի պտուղը և  
չի կարող վճարել իր պարտքերը, նա ապրելու միջոց  
չի ունենա... Վտանգ և սպառնում, վոր մոտ ապագա-  
յում ուսւական մթերքների արտահանության պատճա-  
ռով, ել ավելի կը նկնեն զյուղատեսական մթերքնե-  
րի գները: Դա իսկական կատաստրոֆ կլինի մեր դյու-  
ղացու համար»:

Անհրաժե՞ց և արդյօք ավելի լավ իլլուստրացիա  
այն մեթոդների համար, վորոնց գիմում եր Ֆրանսիան  
և նրա վասարները, համոզելու համար այդ յերկրների  
տնտեսապես քայլայված և աղքատացած գյուղացինե-  
րին, թե նրանց բոլոր աղետները և դժվարություննե-  
րը վոչ թե արդյունք են համաշխարհային գյուղատրե-  
տեսական ճգնաժամին, այլ հացի արտահանմանը ԽՍՀ-ից: Դա վարպետորին մտածված, խորամանկ քաղա-  
քականություն և խորամանկ մեխանիկա յի: Համաշ-  
խարհային պատերազմը հրահրողները փորձում են ա-  
պահովել իրենց թիկունքը ԽՍՀՄ-ի դեմ պատրաստ-  
վող ռազմական արշավում:

Վարչավայի կոնֆերենցիայից հետո նրա իսկա-  
կան բնույթը մերկացվեց Ազգերի լիգայի տնտեսական  
հանձնաժողովում, ուսմինական առեվտրի մինիստր  
Դաշեարուլի յելույթով, վորը կոնֆերենցիայի մասնա-

<sup>1)</sup> Իսկ իրոք խորհրդային հացն արտասահմանում ավելի  
թանգ և վաճառվում, քան մերձանուբերան յերկրներից արտահան-  
ված հացը: Ենս Մարսելի զորքակալության տվյալները նախորդ  
զլխում:

կիցների անունից կոչ եր անում բոյկոտ կազմակերպել  
խորհրդային ապրանքների դեմ:

Բուխարեստի վերջին կոնֆերենցիան հարկավ վո-  
շընչով չի տարբերվում ԽՍՀՄ-ի դեմ աղքարային բլոկ  
կազմակերպելու համար գումարված նախկին կոնֆե-  
րենցիաներից:

Ռումինական նախկին պատգամավոր, «Եպօկա»  
ժուրնալի հրատարակիչ Ֆիլիպեսկուն, Փարիզի «Փուր-  
նալ» թերթի եջերում հետեւյալ կերպ և լուսարանում  
այդ կոնֆերենցիաներում կազմակերպված ադրարա-  
մին բլոկի խնդիրներն ու դիրքերը. «Ռումինիան և Արե-  
վելյան Յեվրոպայի մյուս յերկրները՝ առավելապես  
հողագործական յերկրներ, յենթակա յեն բայլեվդր-  
կյան դեմպինդի մահացու վտանգին, վորը զրկում և  
նրանց արտաքին շուկաներից: Այդ պետությունները  
այժմ բլոկ են ստեղծել միասին պայքար մղելու համար:  
Մենք վճռել ենք վոչ միայն մեր սեփական ուժերով  
պայքար մղել Խորհուրդների դեմ, այլև բոյկոտի յեն-  
թարկել այն յերկրների արդյունաբերական ապրանք-  
ները, վորոնք դեմպինդային դնով պարենավորման  
մթերքներ են գնում Ռուսաստանից: Մենք ուզում ենք  
հարկադրել նրանց ընտրություն անել Ռուսաստանի  
հետ առեվտուր անելու շահի և մեր շուկայի ողտա-  
գործման շահի միջև, շուկայի, վորը կլանում և նը-  
րանց արդյունաբերական արտադրանքի այդպիսի մեծ  
մասը: Յեվ վորովհետեւ հույս կա, վոր նրանց ընտ-  
րությունը նպաստավոր կլինի մեզ համար, մենք աչքի  
առաջ ունենք այդպիսի անուղղակի ճանապարհով յետ  
մղել խորհրդային դեմպինդի գրոհը, վորի դեմ մենք

առանձնապես չենք կարող պայքար մղել բավականա-  
չափ հաջողությամբ»:

Ֆիլիպիսկուի այդ յելույթը ցույց է տալիս Փրան-  
սիական իմպերիալիզմի և նրա վասաների գործո-  
ղության ամբողջ ծրագիրը: Լեհաստանը և Ռումի-  
նիան հանդիսանում են ԽՍՀՄ-ի դեմ պատրաստվող  
ինտերվենցիայի առաջապահ դիրքերը:

Ռումինիան և Լեհաստանը խոշորագույն դեր են  
խաղում «Աղրարային րոլի» պատրաստման, խորհր-  
դային արտահանության դեմ մղվող ամբողջ կամուա-  
նիայի նախապատրաստման բնադրվառում: Ֆրանսիա-  
կան իմպերիալիզմը, վորն այդ յերկրների հետ կամ-  
ված և ուղղմական համաձայնությամբ, նրանց միջո-  
ցով իրադրության մերձության դոր-  
ծողությունները մերձանուրյան և մերձրալիթյան յեր-  
կըրներում: Լեհաստանը և Ռումինիան իրենց արդարը-  
նակաթյան մասսաներում հատուկ ջանքով ամենազաղ-  
րելի ստահող հերուրանքներ են տարածում խորհր-  
դային արտահանության մասին: Նրանց պրովոկա-  
ցիոն յելույթները ԽՍՀՄ-ի դեմ որեցոր լկոի յև դառ-  
նում:

Մերձդանուրյան և բալկանյան յերկրներն այն-  
պիսի յերկրներ են, վորտեղ առանձնապես ամուր հյուս-  
ովել և իմպերիալիստական հակասությունների կծիկը  
և վորտեղ առանձնապես սուր կերպով և արտահայտ-  
վում համաշխարհային գիշտատիչների մրցության պայ-  
քարը:

Ֆրանսիական իմպերիալիզմը վորոշել է հակասու-  
թյունների այդ կծիկն ողտագործել իր հակախորհր-  
դային դավերն իրականացնելու համար: Նույն այդ նը-

պատակով, ֆրանսիական իմպերիալիզմն ամենալայն  
ազիտացիա յե մզում մերձրալիթյան բուրժուական յեր-  
կըրներում, մասնավանդ լատվիայում, Յատոնիայում և  
Ֆինլանդիայում:

Ճնշում գործադրելով Գերմանիայի վրա, նա աշ-  
խատում է այդ յերկիրն ևս ներդրավել հակախորհր-  
դային արշավի:

